

Թիւնս Լատին կղերց • այլ որպէս զի օրինօք կատարեսցեն զգործն, հարկ եղև նոցա հարցումն ուղղել առ դենպետն մեծ և առնուլ զվճիւն նորին, որ ունէր օրինակ զայս • « յերուսաղէմ 'ի Ս. Տեղին, Հայք՝ և պատերազմող ազգն Ֆրանկաց, 'ի սկզբանէ անտի կատարեն անդ զաղօթս, այժմ՝ Լատինք յարուցեալ են 'ի վերայ Հայոց՝ ասեն, թէ դուք իսկապէս չէք բաժանորդ Ս. Տեղեաց • եւ մինչեւ ցայժմ սակա մարդասիրութեան՝ ոչ արգելաք զձեզ, իսկ այժմ արգելումք • Հայք օրինօք հաստատեցին զբաժանորդ լինելն իւրեանց, և որոյ վասն տուեալ են յԱրքունուստ հըրովարտակք և Հէօճճէթ 'ի դատարանէ • Եւ եթէ Լատինք ոչ հնազանդեսցին Կայսերական հրովարտակին, և հակառակ կայցեն նախնի սովորութեանց, զի՞նչ պարտ իցէ առնել նոցա » • Պատասխանի, զան սաստիկ և բանտ ընդ երկար • Ի վերայ այսր՝ ծանուցին զիրս Արքայի, և ըստ հրամանի նորին գրեցաւ հրովարտակ առ դատաւորն եւ առ մեծամեծսերուսաղէմի, խափանել զբռնութիւնս Լատինաց, կախել զկանթեղն, դնել զարկղն եւ զդարանն 'ի տեղիս իւրեանց, տալ կատարել Հայոց զպաշտամունս, որպէս յերեկն և յեռանդն, ժառանգել զսփահական իրաւունս, ըստ զօրութեան հրովարտակաց, դատաստանական գրոց • վճռոյ մեծի դենպետին և վկայութեան այլազգեաց • Իսկ եթէ անաստ գտեալ Լատինաց միւսանդամ հակառակեսցին, թէ ունիմք հրովարտակ յԱրքայէ, առեալ զայն 'ի ձեռաց նոցա և եղեալ 'ի քսակի առաքեսջիք աստ • 'ի ՎՕ Րէպիլ էփփէլ ամսոյ՝ ՎՕՎՎ (1621) •

Ի հասանիլ հրովարտակին յերուսաղէմ, կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի, կոչեցան անդ փոխանորդն եւ թարգմանն Լատինաց • և ընթերցաւ հրովարտակն առաջի բաղումթեան, և 'ի ձեռն թարգմանի բացատրեցաւ իմաստ նորին փոխանորդին Լատինաց, ապա և հարց ցնա դատաւորն՝ հնազանդի՞ս հրամանի թագաւորին մերոյ • և նա ասէ՝ ունիմք հրովարտակ վասն այսր խնդրոյ, եւ մատոյց զայն առ նա • գրեալ 'ի ՎՕ Ճէմազիլ արի ամսոյ՝ ՎՕՔ (1620) • Ընթերցեալ զայն դատաւորին ասէ, թուական ոտրա հին է • ոչ կարեմ՝ առնել ինչ 'ի վերայ այդորիկ • այլ ըստ զօրութեան նոր հրովարտակին և Հէօճճէթին Հայոց,